զմեզ ի տուն իւր. և դարձաւ ունայն։ Աստէն եկին ի միտս դիպուածք նախ-
նեաց զանազանք ի գրոց սրբոց և յարտաքնոց պատմութեանց. նախ, առածն
իմաստասիրաց հնագունից. յորոց յիշմանէն եւ թաղծեցայ եւ յուսադրեցայ։
Ցարեալ անտի՝ նշմարեցի բացագոյն ի ծայր գեղջն գեկեղեցի քարաշէն և մե-
ծածախ. դիմեցի ստէպ առ այն, զուցէ զոք գտանիցէի, զոնէ ի տեղեկանալ
զուրանօր լինելոյս. և ահա խոզարած ոմն ածէր զսակաւ խոզեան, և իսկոյն
ի տեսանելն զմեզ՝ թողեալ զխոզեանն ի փախուստ դարձաւ. որոյ զհետ պըն-
դեալ սպասաւորին՝ հագիւ դարձոյց, ասելով. Ցանօթք քահանայի գեղջս եմք,
և ոչ օտարք կամ ՀԼասակարք։ Իսկ ի խօսակցելն ընդ նմա՝ գտի արդարեւ
բիրտ, սոպռ, կոպիտ, տառ և տմարդի, և արժանի զործոյն ևեթ իւրոյ.
զոր մեծաւ աղերսմամբ և շողոքորդութեամբ հաւանեցուցի մուծանել զմեզ ի
խուղ իւր. առ որ մտեալ՝ ափսոսացի զաղաչանս այնպիսւոյ առն զարարեալս,
վասն այնպիսւոյ տան աղբալւոյ, ժահահոտի և տղմամածի ի կաթլեաց ա-
ռաստաղին. ուր անբաւութիւն ճանճից, որք զրեթէ յակն մարդոյ մտանէին,
և լւոց ոչ սակաւ բազմութիւն. և ոչ իմն տեղի հանգստեան կամ աթոռիկ մի
նստելոյ։ Ցեցեալ ուրեմն յորմն և ի գաւազանս՝ տխրագին վարանէի. զի ի
խոնաւութենէ զգինլեաց՝ սառուցեալ զողայր բոլոր մարմինս, և ի կոփկոփ-
մանէ ատամանցս հագիւ բաւէի խօսել, և թուէր թէ քաղիւր ոգիս, և իցէր
արդ արդ վերահասեալ կէտ վերջին կենիս (կենացս)։

Ցայսմ տաժանման մինչ կայի, ոչ գիտեմ ո՞րպէս՝ մրափեցի, և տեսի յա-
նուրջս զՍուրբն Կայեթանոս, այնու զգեստիւ որով նկարեցեալն է ի մա-
տրանն պալատին իմոյ. որ զուարթագունիւ դիմաւ ասաց ցիս. Ընդէ՞ր այդ-
քան վհատիս. քաջալերեաց, մի երկնչիր. արտաքոյ վտանգի ես։ Ի լսել ըզ-
բանս զայս յուսադրական, իբրեւ կամէի փարիլ ի խնդութենէ զոտիւք Սբր-
բոյն, սահեցեալ յորմոյն յոր յեցեալն էի, անկայ ի գետին, և զարթեայ։
Ի սկսանելս զոհանալ զԱստուծոյ և զՍրբոյն, յանկարծ լուայ զդոփիւն ո-
տից երիվարաց և զձայնս խօսից մարդկան առ զրանն, և երկեայ յոյժ. հա-
մարելով թէ խնդրակք իցէին զկնի հասեալք. և զինչ իցէր յուսալի, եթէ
ոչ կամ ըմբռնումն կամ անողորմ սպանումն. և յանձնեալ զիս Աստուծոյ և
սրբոց խնամակալուացս, ակնկալէի արտագործութեան կարծեացս։ Իբրեւ
մտադրաբար ուշ եդեալ բանից նոցա, զի լեհերէն ասէին ցխոզարածն, « մա-
զապուրծք գրեթէ զերծաք ի ձեռաց Սվէտաց, եթէ չէաք ամապարեալք ի
փախուստ, անկարծիք յափշտակեալք իցէին զձիս, թերեւս և զմեզ »։ զոգի
առի, և իբր ի վտանգէ մահուան փրծանեցեալ՝ կազդուրեցայ։ Ասէ ցնոսա
խոզարածն. Է՞ աստ ի խղիս ոմն փախստական ի Սվէտաց. և թէ ով ոք իցէ
չգիտեմ. բայց թուի թէ մեծատուն ոմն իցէ։ Ապա մի ոմն յեկեղոցն եմուտ
ի ներքս. և հայեցեալ յիս՝ քաղաքավարօրէն ողջունեաց, և ստորայարեաց.
Տէր, չէ այս վասն քո տեղի. խնդրեմ, եթէ հաճեսցիս, մատիցես ի տուն
իմ և հանգիցես. զի տեսանեմ զտէրդ կարի խոնճեցեալ և վշտացեալ։ Շնոր-
հակալութեամբ հանդերձ հետեւեցայ նմա. յորժամ ի տունն մտի և տեսի